ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 փետրվարի 2025 թվականի N 162 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-ի N 970-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության 2023 թվականի հունիսի 16-ի «Երևան քաղաքը գազամատակարարման լրացուցիչ նոր հզորություններով ապահովելու ծրագրին և գազաբաշխման հանգույցների կառուցման իրականացման ժամանակացույցին հավանություն տալու մասին» N 970-Լ որոշման՝

1) 3-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«3) սույն կետի 2-րդ ենթակետում նշված միացման վճարները սահմանելիս միացման վճարից ազատել՝

ա. ոչ առևտրային կազմակերպություն հանդիսացող այն անձանց, որոնք դիմել են ծրագրով սահմանված ուղղությամբ գազամատակարարման ցանցին միացման համար, գազամատակարարման ցանցի կառուցումն իրականացվել է այդ անձանց կողմից, առկա են ավարտական փաստաթղթերը, և կառուցված գազամատակարարման ցանցն անհատույց հանձնել են ընկերությանը,

բ. առևտրային կազմակերպություն հանդիսացող այն անձանց, որոնք դիմել են ծրագրով սահմանված ուղղությամբ գազամատակարարման ցանցին միացման համար, գազամատակարարման ցանցի կառուցումն իրականացվել է այդ անձանց կողմից, առկա են ավարտական փաստաթղթերը, և կառուցված գազամատակարարման ցանցն օտարել են ընկերությանը 100 000 դրամով։».

2) N 1 հավելվածի՝

ա. 6-րդ կետի 3-րդ ենթակետում «։» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով, ինչպես նաև նույն կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ ենթակետով՝

«4) ճյուղ 4՝ Նոր Խարբերդ թաղամաս։»,

բ. 10-րդ կետում «20.0» թիվը փոխարինել «20.78» թվով, «5.3» թիվը՝ «5.35» թվով, «3.8» թիվը՝ «4.53» թվով,

գ. 11-րդ կետի N 1 աղյուսակում «95,5» թիվը փոխարինել «145,5» թվով, «18571,0» թիվը՝ «19300,9» թվով, «20048,0» թիվը՝ «20777,9» թվով,

դ. 11-րդ կետի 1-ին ենթակետում «20.0» թիվը փոխարինել «20.78» թվով,

ե. 14-րդ կետի N 4 աղյուսակում «29,5» թիվը փոխարինել «79,5» թվով, «3534,0» թիվը՝ «4263,9» թվով, «3801,0» թիվը՝ «4530,9» թվով։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

20.02.2025

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ